ՀԱՍՏԱՏՎԱԾ Է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարիչ՝ «Տեղեկատվական համակարգերի հատուկ նշանակության գործիք» ՓԲԸ-ի տնօրենի 2023թ. հունվարի 25-ի որոշմամբ Ընկերության տնօրեն՝ Լ. Ավետիսյան _____	Կազմված է 15 էջից Տպագրված է ընդամենը 3 օրինակ ՕՐԻՆԱԿ 1 **ԳՐԱՆՑՎԱԾ Է** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 14.06.2011թ. գրանցման համար 286.120.23877 վկայական 03 Ա 173877 հարկ վճարողի հաշվառման համար 0270709319.05.2014թ. գրանցված կանոնադրության թիվ_____ փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի _____ տարածքային բաժնի կողմից ___ ___ 2023թ. _____աշխատակից

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

նոր խմբագրությամբ

Digitally signed by MIRZOYAN LILIT 7601951073
Date: 2023.01.27 12:44:09 GMT+04:00

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

1.2. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի ««Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 494-Ն որոշմամբ՝ առանց ժամկետի սահմանափակման, իսկ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի ««Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերությունը փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 494-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 442-Ն որոշմամբ վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության:

1.3. Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր): Ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին:

1.4. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք (այլ միջոցներ), իր ֆիրմային անվանմամբ (հայերեն գրառմամբ՝ զուգակցված ռուսերեն և անգլերեն լեզուներով) կլոր կնիք, փաստաթղթերի հաստատման համար առանձին կնիք, ձևաթղթեր, բլանկներ, ՀՀ օրենսդրությամբ բաժնետիրական ընկերություններին վերապահված իրավունքներ ու պարտականություններ:

1.5. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
Հայերեն լրիվ՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն,
հայերեն կրճատ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ,
ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «Электронаин караварман ентакаруцвацкнери нердрман грасеняк»,
ռուսերեն կրճատ՝ ЗАО «ЭКЕНГ»,
անգլերեն լրիվ՝ «Elektronayin karavarman yentakarutsvadzkneri nerdrman grasenyak» Closed Joint-Stock Company,
անգլերեն կրճատ՝ «EKENG» CJSC.

1.7. Ընկերության իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ընկերության գործունեության նպատակն է՝ քաղաքացիների և բիզնեսի, ինչպես նաև պետական համակարգում էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների շահառուների համար համապատասխան գործիքակազմերի ստեղծում, հարթակների ներդնում, սպասարկում, ինտեգրում, զարգացում և արդիականացում, հանրային և մասնավոր հատվածների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիության ընդլայնում և դյուրինացում:

2.2. Ընկերության խնդիրներն են՝

2.2.1. էլեկտրոնային ստորագրության և էլեկտրոնային նույնականացման հավաստագրման կենտրոնի գործառույթների ապահովում և իրականացում.

2.2.2. պետական փոխգործելիության հարթակի օպերատորի գործառույթների իրականացում, այդ թվում՝ պետական համակարգում գործարկվող էլեկտրոնային հարթակների և կայքերի, ծրագրային լուծումների միջև փոխգործելիության ձևավորում, առկա գործիքների հնարավորությունների ընդլայնում, համակարգերի ինտեգրում,արդիականացում և այլն.

2.2.3. ԵԱՏՄ անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի ստեղծում և պահպանում, էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի՝ Հայաստանի Հանրապետության պետական բաղադրիչի օպերատորի գործառույթների իրականացում.

2.2.4. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված www.govtravel.am ինտերնետային հասցեում զետեղված որոնողական էլեկտրոնային հարթակի օպերատորի գործառույթների իրականացում.

2.2.5. պետության կողմից սահմանված, մշակված, նախագծված էլեկտրոնային կառավարման համակարգերի գործունեության ապահովում.

2.2.6. ՀՀ նույնականացման քարտերի և կենսաչափական անձնագրերի համակարգի սպասարկում.
2.2.7. Քաղաքացիների և իրավաբանական անձանց համար էլեկտրոնային հարթակների միջոցով հանրային ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով պետական ծրագրերից բխող միջոցառումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից համակարգվող ծրագրերի իրականացում.
2.2.8. էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և զարգացման իրականացում.
2.2.9. էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման, հնարավորությունների ստեղծման, առկա լուծումների օպտիմալացման և այս ուղղությամբ այլ գործընթացների հետ կապված ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ ծրագրերի և միջոցառումների իրականացում.
2.2.10. պետական գնումների շրջանակում այլ մարմինների կողմից հայտարարված ծրագրավորման, համակարգչային ցանցերի սպասարկման, կայքերի ստեղծման և սպասարկման, ինչպես նաև ՏՏ այլ գործընթացներին մասնակցություն.
2.2.11. տեղական և արտասահմանյան առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ պայմանագրային հիմունքներով ծառայությունների մատուցում.
2.2.12. մասնակցություն վարկային, դրամաշնորհային ծրագրերին.
2.2.13. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից պահանջվող տարբեր միջգերատեսչական հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում ներգրավվածության ապահովում.
2.2.14. ՀՀ վարչապետի, փոխվարչապետների և ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի հանձնարարականների կատարում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ընկերությունն իրավունք ունի՝
3.1.1. իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.
3.1.2. օրենքով սահմանված կարգով բացել հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես նաև պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում.
3.1.3. ունենալ իր ֆիրմային անվանմամբ, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ.

3.1.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը.

3.1.5. ինքնուրույնաբար կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալու բանկային ու առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով.

3.1.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և բաշխել արժեթղթեր.

3.1.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ.

3.1.8. ինքնուրույնաբար ընտրել իր արտաքին ձեռնարկատիրական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն՝ առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով.

3.1.9. ունենալ արտարժույթով միջոցներ, դրանք ստանալ որպես արտաքին ձեռնարկատիրական գործունեության արդյունք և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով դրանք ձեռք բերել և ինքնուրույնաբար տնօրինել, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վաճառել.

3.1.10. ինքնուրույնաբար պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքն սպառողներին.

3.1.11. ստեղծել մասնաճյուղեր և բացել ներկայացուցչություններ՝ օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան.

3.1.12. օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.1.13. բացի սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեությունից իրականացնել նաև դրանով չնախատեսված և օրենքով չարգելված, էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների զարգացմանը միտված ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն.

3.1.14. զբաղվել օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա, եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված է նման պահանջ.

3.1.15. օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար ունենալ անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ.

3.2. Ընկերությունը պարտավոր է՝

3.2.1. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն.

3.2.2. ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթղթեր,

Ընկերության ներքին փաստաթղթեր, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնակարգեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանումը.

3.2.3. կրել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

3.3. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող ամբողջ գույքով:

3.4. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

3.5. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետիրոջ պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

4.2. Ընկերության կանոնադրական կապիտալն ամբողջությամբ արտահայտվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

4.3. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 25 100 000 (քսանհինգ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 2 510 (երկու հազար հինգ հարյուր տասը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4.4. Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխվում և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

4.5. Ընկերության՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին:

4.6. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է փոփոխվել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում կանոնադրական կապիտալի փոփոխմամբ պայմանավորված սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու և դրանք իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.7. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով:

4.8. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է նվազեցվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը փոքրացնելու կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակը պակասեցնելու միջոցով, այդ թվում՝ բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով:

5. ԱՐԺԵԹՂԹԵՐ

5.1. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել օրենքով նախատեսված արժեթղթեր: Ընդ որում, Ընկերության թողարկած միևնույն տեսակի արժեթղթերը պետք է ունենան թողարկման միևնույն ձևը:

5.2. Ընկերությունն իրավունք ունի թողարկելու և տեղաբաշխելու միայն հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

5.3. Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

5.4. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, կամ այլ իրավունքներով, որոնք ունեն դրամային արժեք:

5.5. Ընկերության բաժնետոմսերը և մյուս արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

5.6. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը գույքով կամ գույքային իրավունքներով իրականացնելիս՝ դրանց դրամային արժեքը ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):

5.7. Բաժնետոմսն անբաժանելի է:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԲԱՇԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

6.2. Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի՝

6.2.1. մասնակցել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

6.2.2. մասնակցել Ընկերության կառավարմանը.

6.2.3. ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.

6.2.4. առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.

6.2.5. ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

6.2.6. ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

6.2.7. հանդես գալ առաջարկություններով ժողովներում.

6.2.8. ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
6.2.9. Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
6.2.10. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալու համապատասխան թվով հասարակ (սովորական) բաժնետոմսեր.
6.2.11. ունենալ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:
6.3. Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը պարտավոր է՝
6.3.1. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով գումարել Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերով.
6.3.2. Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ.
6.3.3. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները.
6.3.4. կրել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

7.1. Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, ապա այդ հիմնադրամին հատկացումները կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:
7.2. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նպատակների համար: Այլ նպատակների համար պահուստային հիմնադրամի օգտագործումն արգելվում է:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
8.2. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ:

8.3. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության տվյալ տարվա զուտ շահույթից (կուտակված շահույթից):

8.4. Շահութաբաժինները վճարվում են դրամով:

8.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու մասին: Որոշմամբ սահմանվում է նաև դրա գործողության ժամկետը, որը, սակայն, չի կարող գերազանցել մեկ տարին:

8.6. Միջանկյալ կամ տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է, համապատասխանաբար, Ընկերության խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ կամ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

8.7. Ընկերության կողմից շահութաբաժինների վճարման նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

9.1. Ընկերությունն ունի գույք.

9.1.1. սեփականության իրավունքով իրեն պատկանող, որի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

- Ընկերության հիմնադիրների, բաժնետերերի կողմից որպես բաժնետոմսերի դիմաց վճարումները, կամ վերջիններիս կողմից Ընկերությանը այլ պայմանավորվածությամբ հանձնած գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները.
- Ընկերության կողմից իրականացվող գործունեությունից ստացված եկամուտները.
- իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ ընկերություններից ստացված միջոցները.
- նվիրաբերությունները.
- հանգանակությունները.
- օրենքով չարգելված այլ միջոցները:

9.1.2. անհատույց, անժամկետ կամ որոշակի ժամկետով օգտագործման իրավունքով կամ պատվիրակած լիազորությունների իրականացմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից տրամադրվող, մասնավորապես՝

- դրամական մուտքերը պետական բյուջեից (դրամաշնորհներ, սուբսիդիաներ և այլն).
- օգտագործման իրավունքով տրված գույքը.
- օրենքով չարգելված այլ միջոցները:

9.1.3. այլ իրավունքով պատկանող:

9.2. Անկախ գույք ձևավորման աղբյուրից՝ Ընկերության գույքը հաշվառվում է՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

9.3. Ընկերության՝ իր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, այդ գույքը տիրապետելու, օգտագործելու և

տնօրինելու առանձնահատկությունները, սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.4. Ընկերության՝ օգտագործման իրավունքով գույքի հետ կապված փոխհարաբերությունները կարգավորվում են պայմանագրային հիմունքներով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով:

10. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

10.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:

10.2. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով:

10.3. Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:

10.4. Անհետաձգելի հարցերի քննարկման համար տարեկան ժողովից բացի գումարվում են արտահերթ ժողովներ:

10.5. Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

10.5.1. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

10.5.2. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.

10.5.3. Ընկերության վերակազմակերպումը.

10.5.4. Ընկերության լուծարումը.

10.5.5. ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

10.5.6. խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

10.5.7. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

10.5.8. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

10.5.9. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

10.5.10. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

10.5.11. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

10.5.12. բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

10.5.13. գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

10.5.14. ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

10.6. Ժողովի իրավասությունները՝ Ընկերության միակ բաժնետիրոջ իրավունքով, իրականացնում է Ընկերության հիմնադիրը՝ բաժնետերը, կամ նրա կողմից լիազորված անձը՝ հիմնադրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակներում:

10.7. Ժողովի որոշումները ընդունվում են սույն կանոնադրության 10.6. կետով սահմանված անձի գրավոր որոշմամբ:

10.8. Ժողովը նախապատրաստվում և անցկացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

11.1. Ընկերության տնօրենների խորհուրդն (այսուհետ՝ Խորհուրդ) իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ վերապահված են Ժողովի բացառիկ իրավասությանը:

11.2. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

11.2.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

11.2.2. տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

11.2.3. ժողովների օրակարգի հաստատումը.

11.2.4. Խորհրդի իրավասությանը վերապահված բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ.

11.2.5. Ստորև նշված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

11.2.5.1. Ընկերության վերակազմակերպումը.

11.2.5.2. ՀՀ օրենսդրության համապատասխան՝ Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

11.2.5.3. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

11.2.5.4. բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

11.2.6. Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը,

11.2.7. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

11.2.8. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը՝ առաջնորդվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ.

11.2.9. Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

11.2.10. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
11.2.11. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
11.2.12. դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
11.2.13. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
11.2.14. այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
11.2.15. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.
11.2.16. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
11.2.17. ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
11.2.18. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.
11.2.19. Խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.
11.2.20. ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
11.3. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով:
11.4. Խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:
11.5. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:
11.6. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):
11.7. Խորհրդի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ խորհրդի անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:
11.8. Խորհրդի քանակական կազմը չի կարող երեք անդամից պակաս լինել:
11.9. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
11.10. Խորհրդի նախագահը և անդամները չեն կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել:

11.11. Խորհրդի նախագահն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆՁՆՅԱԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ (ՏՆՕՐԵՆԸ)

12.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Տնօրենի կողմից:

12.2. Տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

12.3. Տնօրենին պաշտոնի նշանակում և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է խորհուրդը: Գործադիր տնօրենը չի կարող միաժամանակ լինել խորհրդի անդամ:

12.4. Տնօրենի՝ պաշտոնի նշանակումից հետո Խորհրդի նախագահը Ընկերության անունից Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

12.5. Տնօրենը՝

12.5.1. կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը.

12.5.2. նախապատրաստում է առաջարկություններ Ընկերության վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ.

12.5.3. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

12.5.4. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

12.5.5. գործում է առանց լիազորագրի.

12.5.6. տալիս է լիազորագրեր.

12.5.7. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

12.5.8. կատարում է պայմանագրերից բխող վճարումների իրականացում և եկամուտների գանձում.

12.5.9. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ, հաշիվներ կարող է բացել նաև գանձապետարանում.

12.5.10. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, գործունեության ծրագիրը, ծախսերի և եկամուտների նախահաշիվները, դրանց փոփոխությունները.

12.5.11. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

12.5.12. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

12.5.13. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

12.5.14.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը.

12.5.15. հաստատում է Ընկերության ներքին կարգապահական կանոնները"

12.5.16. Ընկերության աշխատողներին տալիս է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, այդ թվում պարգևատրում.

12.5.17.իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իր հետ կնքված պայմանագրով և այլ համաձայնագրերով սահմանված գործառույթներ՝ կապված Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

13.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է Ընկերության վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը), որին ընտրում է Ժողովը:

13.2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իր գործունեության մեջ հաշվետու է Ժողովին:

13.3. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը)՝

13.3.1. հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը.

13.3.2. ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու սույն կանոնադրությանը.

13.3.3. իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը:

13.4. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, կամ Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

13.5. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրավունք ունի՝

13.5.1. ստուգման ընթացքում պահանջել և ստանալ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները.

13.5.2.պահանջել արտահերթ ժողովի գումարում.

13.5.3.իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13.6. Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է Ժողովի որոշմամբ:

13.7. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպության կամ ֆիզիկական անձի), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության

կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

13.8. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության բաժնետիրոջ պահանջով:

13.9. Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է Ժողովը՝ առաջնորդվելով գնումները կարգավորող օրենսդրությամբ:

13.10. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը, իսկ բաժնետիրոջ պահանջով աուդիտի իրականացման դեպքում՝ բաժնետերը:

13.11. Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը՝ առաջնորդվելով գնումները կարգավորող օրենսդրությամբ:

13.12. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում են գրավոր եզրակացություններ:

14. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

14.1. Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

14.2. Ընկերության տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

14.3. Ընկերության տարեկան հաշվետվությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են նախնական հաստատման Խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԵԼԸ

15.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը կատարվում է Ժողովի որոշմամբ:

15.2. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության՝ նոր խմբագրությամբ

կանոնադրությունը, երրորդ անձի համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանց պետական գրանցման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նման գրանցում կատարող պետական մարմնին կատարված փոփոխությունների մասին իրազեկելու (ծանուցելու) պահից:

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

16.1. Ընկերության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է սույն կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով: